

Կապան համայնքի ղեկավար Գեորգ Փարսյանի շնորհավորական ուղերձը՝ Կապանի օրվա կապակցությամբ



Սիրելի կապանցիներ

Այսօր հիրավի մեծ տոն է. նշում ենք կապանցիներիս համար թերեւս ամենակարեւոր օրը՝ Կապանի ծննդյան տարեդարձը, տոն, որը եւս մեկ անգամ հիշեցնում է բոլորիս, թե ինչքան թանկ է մեզ համար Կապանը, եւ թե ինչքան ենք մենք հպարտանում նրա հարուստ ժառանգությամբ, պատմական անցյալով եւ հավատում ծաղկուն ապագային:

Չնայած նրան, որ Կապանը շրջանային ենթակայության բարձր կարգավիճակ է ստացել 1938 թվականին, եւ շատերի մոտ տպավորություն է ստեղծվել, թե Կապանն ընդամենը 82 տարեկան է, այդուհանդերձ, այսօրը եւս մեկ առիթ է փաստելու, որ Կապանն ունի ավելի հին ու հարուստ պատմություն. այն արդեն իսկ բնակավայր էր 5-րդ դարում, իսկ 10-րդ դարում՝ հռչակվել էր Սյունիքի թագավորության մայրաքաղաք:

Վարուց ի վեր լինելով Սյունյաց աշխարհի հզոր քաղաքական, տնտեսական ու վարչական կենտրոններից մեկը՝ Կապանը դարձրել էր շարունակ մնաց հայոց պետականության հուսալի հենասյունը: Ունեցավ իր ծաղկման ու անկման ժամանակաշրջանները, բանիցս ավերվեց ու կրկին շենացավ եւ բազմիցս դարձավ հայ ժողովրդի ազգային ազատագրական պայքարի դրոշակակիրը:

Լինելով ռազմավարական նշանակության սահմանամերձ գոտի՝ Կապանը խորհրդային տարիներին ապրեց իր ծաղկուն շրջանը, դարձավ եռուկ արդյունաբերական կյանքով ապրող քաղաք եւ գլխավոր մշակութային կենտրոն:

Կապանի հարուստ կենսագրության էջերը հերոսական դրվագներով բազմապատկեցին Արցախյան ազատամարտի տարիներին: 28 տարի առաջ ազերիների կողմից առաջին անգամ ռմբակոծվեց Կապանը. մեկը Չայաստանի քաղաքներից, որն անմիջականորեն իր վրա զգաց պատերազմի ողջ սարսափները, ավերիչ ռմբակոծություններն ու օդային տագնապները. ցավոք այսօր դրա մասին շատ քչերը գիտեն: Իհարկե, պատերազմի մասին շատերն են լսել կամ կարդացել, շատերն են խոսում պատերազմի մասին, բայց երբեմն չեն արեւելվել պատերազմի արհավիրքներին, երբեմն չեն զգացել պատերազմի հոտը, իսկ կապանցիներն հաղթել է չհայտարարված պատերազմում, անտեսել ու արհամարհել է պատերազմի ահուսարսափը, դիմակայել վշտին ու դժվարություններին, մոպե ու ցուրտ օրերին, մահաբեր գնդակոծություններին եւ, այդուհանդերձ, կարողացել է իր անկողում ոգու եւ կամքի շնորհիվ շարունակել ապրել եւ վերակառուցել ավերակների վերածված իր սիրելի քաղաքը:

Եվ պատահական չէ, որ այսօր Կապանի օրը կրում է «Առողջ Կապան, հերոսների օրրան» կարգախոսը, բանի որ Կապանն իսկապես հերոսների օրրան է, ինչի վառ ապացույցը Բաղաբուրջի հուշահամալիրն է, ուր հանգում են մեր արժանապատիվ զոյրության, մեր ազգային հավաքական իղծերի, մեր անվտանգության ու անխտիր բոլորի խաղաղ երկնքի համար նահատակված հերոսները: Հաղթանակները երբեք հեշտ չեն տրվել, դրանք կերտելու ճանապարհին մեր կապանցի հայրերին

Նվիրաբերել են ամենաթանկը՝ իրենց կյանքը, որոնց օրինակով դեռ տասնյակ սերունդներ են դաստիարակվելու: Նրանց շնորհիվ է, որ Կապանը կարողացել է նոր կյանքով ապրել, ծաղկել ու շնչել եւ այսօր դարձել է Չայաստանի Հանրապետության հարավային մայրաքաղաքը:

Այսօր էլ մենք պատերազմի մեջ ենք, ապրում ու աշխատում ենք դժվար ժամանակահատվածում եւ պայքարում մի թշնամու դեմ, որն անծանոթ է, անտեսանելի, իսկ թողած հետեւանքները՝ անդառնալի: Ցավոք այն սահմաններ չի ճանաչում եւ շարունակում է ընդլայնել իր աշխարհագրությունը, այդ ճանապարհին խլելով մարդկային կյանքեր, ոչնչացնելով հզոր տնտեսություններ՝ ստիպելով երկրի բնակչությանը՝ ամիսներ շարունակ ապրել արտակարգ ռեժիմով:

Հաշվի առնելով, որ պատմությունն արդեն իսկ մեզ սովորեցրել է չընկճվել, պայքարել եւ հաղթահարել ցանկացած արհավիրք, համոզված եմ, որ միասնական ուժերով, քաղաքացիական բարձր գիտակցությամբ ու կարգապահությամբ կհաղթենք նաեւ այս չարիքին: Եվ նույնիսկ այս պարագայում հպարտությամբ պետք է արձանագրեմ, որ կապանցիներն ունեն անգամ տարբերվեց իր գիտակցության, զգոնության, անհատական պատասխանատվության բարձր մակարդակով, ինչի մասին այսօր վկայում են Կապանում կորոնավիրուսի ցածր ցուցանիշները:

Օգտվելով առիթից, ցանկանում եմ նաեւ շնորհակալություն հայտնել մերօրյա հերոսներին՝ բուժաշխատողներին, ովքեր առաջնագծում են եւ պայքարում են հանուն բոլորիս առողջության, բանի որ հենց ձեր շնորհիվ է, սիրելի բուժաշխատողներ, որ մենք ունենք առողջ Կապան...

«Առողջ Կապան, հերոսների օրրան»

Սիրելի կապանցիներ

Մեր սիրելի քաղաքը տարբեր ժամանակաշրջաններում միշտ էլ պատվով է անցել իր ճանապարհը, տարեցտարի գեղեցկացել, զարգացել եւ բարգավաճել է յուրաքանչյուր կապանցու անմաքորդ նվիրումի եւ աշխատանքի շնորհիվ, ինչի արդյունքում Կապանն այսօր իր տարեդարձը դիմավորում է շրջափելի ձեռքբերումներով եւ խոստումնալից հաջողություններով: Մեր քաղաքն այսօր ավելի գունեղ է, կայտառ, գրավիչ ու ջերմ:

Կապանի զարգացման հարցում էլ մեր նպատակը մեկն է՝ համադրելով մեր սիրելի քաղաքի անցյալն ու ներկան, պահպանել կապանյան հին ու բարի ավանդույթները՝ ապահովելով հարմարավետ ու գեղեցիկ միջավայր ինչպես կապանցիների, այնպես էլ Կապան այցելողների համար:

Ուզում եմ, որ միշտ հիշեք, որ Կապանը Ձեր հոգու եւ մարմնի մի մասնիկն է, ոգեշնչման ու եռանդի աղբյուրը, եւ այդ գիտակցությամբ հպարտ լինեք, որ ծնվել եւ ապրում եք աշխարհի ամենաշքեղ, հնամենի, բայց եւ միշտ երիտասարդ, ժամանակին համընթաց քայլող ու ներկայանալի քաղաքում: Եվ ինչպես կասեք սիրված եւ հարգված կապանցի Վաչե Եփրեմյանը՝ «Ավելի լավ է լինել ոչինչ մի քաղաքում, որն ամեն ինչ է, քան լինել ամեն ինչ մի քաղաքում, որը ոչինչ է»:

Համոզված եմ, որ թեկուզ այս դժվար պայմաններում՝ դրսևորելով միասնություն եւ վճռակալություն, մեզ կհաջողվի համատեղ առաջ շարժվել, շենացնել, առավել բարեկարգ ու գեղեցիկ դարձնել երազանքների մեր հարավային մայրաքաղաքը՝ կապանցիների ընդհանուր տունը:

Այսօր, առանց վարանելու կարող ենք ասել, որ Կապանը կայուն եւ համաչափ զարգացող քաղաք է, որը հպարտությամբ է նայում իր բազմադարյա անցյալին եւ վստահությամբ՝ խոստումնալից ապագային:

Շնորհավոր տոնը, հարավային մայրաքաղաք Կապան:



Վարչապետ Նիկոլ Փաշինյանի շնորհավորական կապանցիներին

Այսօր Չայաստանի ամենազեղատեսիլ եւ գրավիչ քաղաքներից մեկի՝ Կապանի օրն է:

Սիրելի կապանցիներ, շնորհավորում եմ մեր քաղաքի օրվա առիթով: Սիրում եմ բոլորիդ, հպարտանում եմ բոլորով, խոնարհվում եմ բոլորիդ առաջ:

Խուստուսի պես հպարտ եւ դուխով:

15 ՕԳՈՍՏՈՍԻ 2020Թ.

Սյունիքի մարզպետ Հունան Պողոսյանի շնորհավորանքը՝ Կապանի օրվա կապակցությամբ



Սիրելի կապանցիներ եւ քաղաքի հյուրեր

Անկեղծորեն շնորհավորում եմ բոլորիս այսօր Սյունյաց մարզկենտրոնում նշվող տոնի՝ հնագույն, բայց հավերժ երիտասարդ եւ օր-օրի նորացող Կապանի օրվա կապակցությամբ:

Քաղաքի տոնը նշանակալի է բոլոր նրանց համար, ովքեր սիրում են իրենց ծննդավայրը, ովքեր իրենց մտքի եւ ձեռքի մեծ աշխատանքն ու հոգու մի մասնիկն են ներդրում Կապանի հարստեւման համար ու զարգացման մեջ:

Այստեղ խնամքով պահպանվում են տարածաշրջանի պատմությունը, ավանդույթներն ու մշակույթը: Այն ամենը, ինչ ստեղծվել է տարիների ընթացքում նախորդ սերունդների աշխատանքով ու արարած կյանքով, հարստացվում է ներկայիս բնակիչների ձեռքբերումներով, իսկ դրա գրավականը ոչ միայն արդի՝ հարուստ կենսափորձով ավագ սերունդն

«Չաարատ Կապան» ՓԲ ընկերության տնօրեն Դավիթ Թովմայանի շնորհավորական խոսքը Կապանի օրվա կապակցությամբ



Սիրելի կապանցիներ, «Չաարատ Կապան» ՓԲ ընկերության աշխատակիցների ու իմ անուկից շնորհավորում եմ բոլորիս Կապանի օրվա կապակցությամբ:

82 տարի առաջ Կապանը քաղաքի կարգավիճակ ստացավ եւ արդեն 8 տասնամյակ է՝ աշխատավոր կապանցու բազկի ու արարումի շնորհիվ քաղաքն

է, այլեւ մեր տաղանդավոր, ակտիվ, նպատակասլաց երիտասարդությունը՝ լի հայրենի եզերքի հանդեպ սիրով ու այն ծաղկեցնելու ցանկությամբ: Մենք միասին կարող ենք հաղթահարել ժամանակավոր դժվարություններն ու հավատալ քաղաքի առավել խոստումնալից ապագային: Սիրելի կապանցիներ, գիտեմ, թե ինչքան եք սիրում մեր քաղաքն ու ամեն տարի, հատկապես երիտասարդները, ինչ անհամբերությամբ եք սպասում այս օրվան՝ քաղաքի տոնին, որպեսզի միասնական դուրս գաք քաղաքի՝ տոնական շունչ ստացած փողոցներ, համերգասրահներ, հրապարակներ, ուրախանաք, մասնակցեք միջոցառումների, շնորհավորեք միմյանց ու հարազատ Կապանին: Սակայն այս տարի, հասկանալի պատճառներով, զանգվածային միջոցառումներով հնարավոր չէ օրը տոնել, բայց բոլորս ենք տեսնում, որ համայնքն ամեն ինչ արել է, որ այստեղ զգացվի տոնական շունչը, որ թեկուզ համացանցի միջոցով բոլորիդ հասնի տոնի զգացողությունը. ինչ որ առումով առցանց հարթակները հիանալի հնարավորություն են նաեւ դրսևում բնակվող կապանցիներին միավորելու համար:

Կրկին շնորհավորում եմ Կապանի օրը, մաղթում եմ բոլորին բարեկեցություն, առողջություն եւ խաղաղություն, նաեւ՝ համերաշխություն, փոխադարձ աջակցություն, որպեսզի սիրելի քաղաքը միասնական աշխատանքի միջոցով դարձնենք ավելի գեղեցիկ, ժամանակակից, հարմարավետ ու գրավիչ եւ օր առաջ ապրենք մեր երազած Կապանում:

Շնորհավոր տոնը, Կապան:

առանձնանում է իր տեսակով: Կապանը յուրահատուկ հմայք ունի, հերոսական պատմություն ու խոստումնալից ապագա:

Հպարտությամբ ենք արձանագրում, որ Կապանի կառուցման ու զարգացման գործում զգալի է նաեւ Կապանի կոմբինատի նախկին եւ ներկա աշխատակիցների ներդրումը:

Լինելով Կապանի ամենամեծ գործատուն մեր ընկերությունը մեծ սիրով է մասնակցում համայնքի զարգացմանն ուղղված ծրագրերի իրականացմանը:

Բոլոր կապանցիներին ցանկանում եմ խաղաղություն, առողջություն, հայրենի քաղաքում արարելու ու բարեկեցիկ կյանքով ապրելու հնարավորություն:

Թող Կապանը միշտ ապրի բոլորիդ մեջ ու երբեք չկասկածեք, որ ապրում եք աշխարհի ամենաշքեղ, գեղեցիկ ու յուրահատուկ քաղաքում, եւ թող բոլորիս գործուն մասնակցությամբ մեր քաղաքը էլ ավելի լավը դարձնենք:

Շնորհավոր տոնը, Կապան:

ԴԱՎԻԹ ԳԱՍՊԱՐՅԱՆ. «Յայ գրականությունը հայոց պատմական հոգեկերտվածքի գեղարվեստական խտացումն է»

Յարցազրույց բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, արվեստի վաստակավոր գործիչ Դավիթ Գասպարյանի հետ

– Դարոն Գասպարյան, մեր օրերում կատարվող հանրակրթության ոլորտին առնչվող իրադարձություններն ուշադրության կենտրոնում են նաև Սյունիքում, մարդիկ հետաքրքրված են խնդրով, շատ-շատ հարցեր էլ պարզաբանման կարիք ունեն, ուստի կխնդրեմք պատասխանել խմբագրությանը հուզող մի քանի հարցի:

«Յայ գրականություն» առարկան ինչ խնդիր է հետապնդում հանրակրթական դպրոցում:

– Նախ՝ գրականությունն արվեստի տեսակ է, արվեստների մայրն է եւ ոչ թե հերթական առարկա: Գրականությունը մարդու մեջ դաստիարակում է վեհի, բարձրի, գեղեցիկի, հերոսականի զգացողություն: Այդ ամենը ներկայացվում է գրողների որոշակի երկերով, գրական կերպարների միջոցով: Գրականությունը մարդկայնության, սիրո դասեր է տալիս: «Յայ գրականություն» առարկայի դասավանդումը դպրոցում հետապնդում է հենց այդ նպատակները:


Երկրորդ՝ գրականությունը նպատակ ունի հղկելու մայրենի լեզուն, որովհետեւ լեզվի օրենքները մի բան են, երբ լեզուն սովորում են ըստ քերականության օրենքների, իսկ լեզվի բառապաշարը, ոճը, բարձր հայերենը՝ մեկ այլ բան: Լեզվական մտածողությունը, ոճի, խոսքի գեղեցկությունը մարդուն փոխանցվում են ազգային գրականությամբ: Եվ երանելի է նա, ով խոսում է անթերի, կատարյալ լեզվով: Գեղեցկության գաղտնիքը նախնախառն աչքերով է:

Երրորդ՝ գրականությունը միջոց է ճանաչելու մարդ արարածին: Յայտնի են գրականության մի քանի բնորոշումներ, նախնախառն՝ մարդագիտություն: Այն ճանաչել է տալիս մարդուն, նրա ներաշխարհը, բացահայտում նրա գիտակցական, անգիտակցական, ենթագիտակցական վարքի կանոնները, մերկացնում օտար աչքի համար փակ նրա ընդերքը: Մենք կողք-կողքի ապրում ենք եւ իրար այրաքան էլ չենք ճանաչում: Գրականությունն այն արվեստն է եւ դպրոցում ուսուցանվող այն առարկան, որ խորքային մարդագիտություն է սովորեցնում, հույզ, զգացմունք եւ ապրումներ արթնացնում:

Եւ, ի վերջո, հայ գրականությունն ի սկզբանե ունեցել է մի կարեւոր առաքելություն, եւ ըստ ամենայնի եղել է իր ժողովրդի պատմական ճակատագրի ուղեկիցը: Յայ գրականությունը հայոց պատմական հոգեկերտվածքի գեղարվեստական խտացումն է: Յայ գրականությունը հայոց ոգու, հայոց պատմության, հայկական բնաշխարհի, ազգային կյանքի ու կենցաղի, պատմական հիշողության, ժամանակների կյանքի, գույների, ձայների ու զոների գեղարվեստական մարմնավորումն է: Յայ մարդու հոգեկերտվածքն առաջին հերթին հայ գրականության մեջ է, հենց թեկուզ աստվածային Նարեկացու «Որբերգության մատյան»-ում, որի մեջ հայի ու Յայաստանի մասին չի խոսվում, բայց հայկականությունը լուծված է ընդերքի մեջ եւ ընդերքից երկնք հասած Արարատի պատկերում:

Ձեր հարցի պատասխանն է իմ VII դասարանի գործող «Գրականություն» դասագրքի մուտքը՝ «Ի՞նչ է գրականությունը» հարցադրումով ու պատասխանով: Սովորող պետք է իմանա՝ ի՞նչ է գրականությունը, որո՞նք են հայ գրականության առանձնահատկությունները եւ ինչո՞ւ է այն սովորում:

– ԻՆչու հենց հիմա մեր իշխանությունը խնդիր դրեց վերաբժշակվել



կամ, որ միեւնոյն է, վերանայել հայ գրականության եւ հայոց պատմության ուսուցման ծրագրերը, կրթական չափորոշիչները:

– Այս բնագավառում այն ամենը, ինչ արվում է, չունի հանրային պահանջարկ: Շատ կարեւոր բան են ասում: Երբ մի տեղ են գնում, բեզ պիտի սպասեն: Եթե չեն սպասում, չպիտի գնա: Եթե մի բան անում են, եւ դրա պահանջարկը չկա, ուրեմն ժամանակավրէպ է: Այն ամենը, ինչ հիմա արվում է հայ գրականության եւ հայոց պատմության դպրոցական ծրագրերի հետ, չունի հանրային պահանջարկ, այդ իսկ պատճառով լուրջ մտահոգություններ է առաջացել առաջին հերթին ուսուցչության եւ ծնողների մեջ: Այդտեղից էլ բխում են մտազոյս բաները: Ինչպէս ասացի՝ նախ եւ առաջ չունի հանրային պահանջարկ, որովհետեւ չի բխում նախկինում արվածը մի քայլ առաջ տանելու, ավելի շտկելու, ավելի բարելավելու, ավելի կատարելագործելու մղումից: Քայլերի տրամաբանություն պետք է լինի ամեն ինչի մեջ: Այստեղ խաչ է բաշված ամեն տեսակի սրբազան, լուսավոր բաների վրա: Պատկերավոր ասած՝ արվածը նման է երկրաշարժի ենթարկված քաղաքի. հիշեք 1988-ի դեկտեմբերի 7-ին հողին հավասարեցված Գյումրին, հիշեք տասնյակ հազարներով զոհվածներին ու հաշմանդաններին: Յայ գրականության, ընդհանրապես գրականության ուսուցման առաջարկվող ծրագիրը նման է այդպիսի երկրաշարժի թողած հետեւանքներին:

Յայ մարդուն միշտ բնորոշ է եղել ազգային հիշողությունը: Եվ խառնել ժամանակագրությունը, որովհետեւ ժամանակագրությամբ դաստիարակված աշակերտը գիտուն է լինում, նշանակում է նրան զրկել պատմական հիշողությունից, խախտել հաջորդականության տրամաբանությունը:

Այդ չափորոշիչների բովանդակային միջուկն ամոթալիորեն խայտառակ մի բան է: Յուրաքանչյուր քննադատությունից եւ ամեն մի ելույթներից հետո սկսեցին մի որեւէ բան ավելացնել ու հայտարարել՝ տեսե՛ք՝ ներառված է Իրողությունն այն է, որ շրջանառված նախնական տարբերակով ամբողջ միջնադարյան հայ գրականությունը հանված էր՝ սկսած գրերի գյուտից, Մաշտոցից ու Խորենացուց, Ոսկեդարի մյուս հսկաներից, ներառյալ Նարեկացի, Շնորհալի, Ֆրիկ, նաեւ առակագիրներ ու այլ հեղինակներ: Սա ուսնձգություն է ազգային արժեքների եւ ազգային մտավոր հարստության դեմ:

Պետություններ կան, օրինակ՝ Լեհաստանը, Ֆրանսիան, նաեւ այլ երկրներ, որոնք ունեն Ազգային հիշողության կենտրոններ, որտեղ ի մի են բերվում այն բոլոր արժեքները՝ կրթական, ոչ կրթական, գրական, մշակութային, գիտական, տեխնիկական, կենցաղային, բարոյական, որ տվյալ ազգն ստեղծել է իր գոյատեւման ընթացքում: Սա ազգին ճանաչում է բերող արժեքային ներկայությունն է համաշխարհային պատմության մեջ: Չմոռանանք, որ համանման գործունեություն ծավալում է նաեւ ՅՈՒՆԵՍԿՕ-ն:

Իսկ մենք հասանք այն բանին, որ փորձում ենք ոչ թե ստեղծել ազգային հիշողության կենտրոն, այլ ազգային հիշողությունը պահպանող հայոց պատմությունը եւ հայ գրականությունն այնպիսին դարձնել, որ կորցնենք այդ հիշողությունը: Սա առաջին հերթին հարված է ազգային անվտանգությանը՝ այսօր հայ գրականությունն ու հայոց պատմությունը կոտնահարեն, վաղը՝ հայն ու Յայաստանը: Թույլ չենք տա:

Ընդ որում՝ այս մշակութային եղեռնին եւ փորձեցի նայել նաեւ իրենց իսկ տեսանկյունից. դարձյալ չի ընկալվում, ամեն ինչ անտրամաբանորեն շատ է խառնված՝ հեղինակները, ժամանակագրությունը, գեղարվեստական արժեքները: Անհասկանալի է գրողի մատուցման սկզբունքը՝ կենսագրական, վերլուծական լինելով՝ է, թե՞ ոչ: Միայն գրական երկի բնագրով բան դուռ չի գա: Անհրաժեշտ է մեթոդական ուղեցույց: Որքան էլ սովորողին մղենք ինքնուրույնության, այնուամենայնիվ, դա չպետք է դարձնել մտասեռնում, այդ ինքնուրույն աշխատանքին ունակ չեն անգամ շատ ուսուցիչներ: Ուստի՝ տարբեր համամասնություններով պետք է ուղղորդել եւ՝ աշակերտին, եւ՝ ուսուցչին: Եվ դա պետք է անի ծրագիրը, որի հիման վրա ստեղծվելու է դասագիրք:

Ասացի՝ երկրաշարժ: Սա անուղղելի ու կործանարար հարված է հայ դպրոցին, նոր սերնդի հայեցի կրթությանը, ազգային հայեցակարգին, Յայաստանի վաղվա օրվան, պատմական հայրենիքի վերականգնման երազանքին, դիրքերում սահման պահող զինվորին, Անդրանիկի ու Թումանյանի հիշատակին:

– Յայ հանրությունը Ձեզ ճանաչում է որպես սկզբունքային գիտնական եւ քաղաքացի, այսինքն՝ Դուք կարողանում եք բոլոր պարագաներում մարդու աչքերին նայել եւ ասել ճշմարտությունը:

Կուզենայինք իմանալ՝ վերջին 30 տարվա կտրվածքով ի՞նչն էր մեզանում պակասում եւ դասագրքաստեղծ ոլորտում, եւ չափորոշիչների ու ծրագրերի առումով, որ հիմա վերանայելու, շտկելու խնդիր է դրվում:

– Այս չափորոշիչը ասվածը, որի գլխավոր բաղադրիչը բովանդակային միջուկն է, պարբերաբար վերանայվող կրթական կառուցողություն է, բայց այնպես չէ, որ անհարկի եւ անժամանակ պետք է միջամտել: Ծրագիրն ու դասագիրքն էլ գործածության որոշակի ժամանակի մեջ հաստատուն բաներ են, դպրոցն էլ եկեղեցու պես մի կառույց է, ավելի ավանդապահ, որ արագ, կտրուկ եւ շրջադարձային փոփոխություններ չի սիրում, իր մեջ այդ պահանջը չի կրում:

Ներկայումս գործող չափորոշիչները, եթե չեն սխալվում, ստեղծվել եւ մշակվել են 2005 թվականին, 2010-ին վերանայվեցին, ինչու էլ այդ խմբի ղեկավարն էի: Խումբը գործում էր Կրթության ազգային ինստիտուտի համակարգում. նախ ձեւավորվեց

մասնագետների խումբը, ստեղծվեց չափորոշիչների բովանդակային միջուկը, շարադրվեցին մեթոդական պահանջները, այդ ամենը մի քանի ձեւով ստուգվեց, դպրոցներում փորձարկվեց, փորձագիտական ճանաչարհի անցավ, որից հետո ուղարկվեց նախարարություն՝ հաստատման: Այն ժամանակ ամեն ինչ շատ պարզ էր, շատ հստակ էր ու թափանցիկ, գաղտնի, մութ ու թաքուն ոչինչ չկար: Յրապարակավ բոլորը գիտեին ամեն ինչի մասին:

Չափորոշիչների՝ ներկայումս առաջարկվող բովանդակային միջուկը ոտքից գլուխ արատավոր է, պետք է ոչ թե շտկել, կոսմետիկ միջամտություն անել, այլ արմատապես ժխտել եւ ստեղծել նորը. նկատի ունեն են հայ գրականության, եւ հայոց պատմության չափորոշիչները, որոնք պիտի բխեն հայ ժողովրդի ներկա շահերից, հոգեբանությունից ու պահանջարկից: Պետք է ստեղծել ժողովրդի մատաղ սերնդի դաստիարակչական պահանջները բավարարող հայակերտիչ, հայապահպան եւ հայապաշտպան չափորոշիչ ու ծրագիր եւ ոչ թե պարտադրել դեսից-դենից իրար կայցրած ինչ-որ բան:

– Արդ, որոնք են հանրակրթական դպրոցի առջև ծառայած հիմնարար խնդիրները:

– Ժամանակակից դպրոցը պետք է լինի տասնամյա ուսուցմամբ. սա կրթության ստուգված ոսկե օրենքն է: Բոլորիսլայի պայմանագրին միևնույն հետո անցան 12-ամյա կրթության, որը չարիք ու աղետ է: Ինչո՞ւ ենք երեխաների պայծառ կյանքից ու ժամանակից խլում երկու տարի, երբ նրանք կարող են երկու տարի շուտ կյանք մտնել: Եվրոպական երկրներն այն խնդիրները չունեն, ինչ ունենք մենք: Ուստի՝ դպրոցական ուսուցման կառուցվածքը պետք է արմատապես վերանայել:

Ավարտելով դպրոցը՝ եվրոպացի պատանին կյանքի իր խնդիրներն է լուծում: Իսկ մեր տասներկուերորդ դասարանցի պատանու մեկ ոտքը դպրոցում է, մյուսը՝ գինկոմիսարիատում: Այդպես չի կարելի: Նա պետք է դպրոցը երկու տարի շուտ ավարտի, կյանք մտնի, իմանա ինչն ինչոց է, որ մի քիչ ամրացած, հասունացած լինի, եւ ոչ թե դպրոցականի հոգեբանությամբ զորակոչվի բանակ եւ ծառայի հայրենիքին:

Մեր պայմաններում աղետ է նաեւ բարձրագույն դպրոցի երկատնիցան ուսուցումը՝ բակլավիթատ, մագիստրատուրա. նույն դասախոսը պարապում է եւ բակլավիթատում, եւ մագիստրատուրայում. նույն դասախոսություններն են, առաջընթաց չկա: Անհարկի տուրք ենք տալիս ձեւակերպին: Բարձրագույն դպրոցը պետք է դարձնել հնգամյա: Երեխան երկու տարի դպրոցում է կորցնում, մեկ տարի՝ բուհում: Երեք տարի խլում ենք երիտասարդի կյանքից, երբ նա այդ ընթացքում կարող էր իր տեղը գտնել կյանքում: Մենք դրա իրավունքը չունենք: Դա հանցագործություն է:

Եվ հետո՝ ի՞նչ պատրաստվածությամբ է աշակերտը կյանք մտնում՝ թերի, որովհետեւ այն առարկաները, որոնք իրեն պետք են՝ ավարտական դասարաններում ստիպված պարապում է կրկնուսուցանողի մոտ: Այսինքն՝ դպրոցը լիարժեք պատրաստվածություն չի տալիս: Մինչդեռ նա պետք է ավարտեր հանրակրթական առարկաների եւ լեզուների լավ իմացությամբ, տիրապետեր ներսնկական միջոցներին, իմանար լողալ, պարել եւ հատկապես ատեստատի հետ մեկտեղ ձեռք բերել վարորդական իրավունքի վկայական:

– Կրկին անդրադառնանք դպրոցին ու հայ գրականությանը:

– V-VI դասարանների դասագրքերը կոչվում են «Մայրենիք»: Դա թերի դասագիրք է՝ մի քիչ օրորոցային, ընդգրկված են թույլ գրական գործեր, լեզուն ու գրականությունը միավորված են: Առաջարկում են այդ դասագիրքը կիսել՝ լեզուն եւ գրականությունն առանձնացնել: Այդ դեպքում միայն դպրոցականը հստակ կգիտակցի՝ որոնք են գրականության եւ որոնք են լեզվի պահանջները:

V-VI դասարանների գրականության այս նոր դասագրքերում կարելի է տեղ տալ ինչպես հայ գրողներին, այնպես էլ համաշխարհային գրականության դասականներին, նաեւ արժանավոր ժամանակակից հայ գրողներին: Այս հանգուցային հարցը լուծելով՝ լուծած կլինենք մի քանի խնդիրներ:

Յիմա գանք առաջ. միջին դպրոցի՝ VII, Հարունակությունը՝ էջ 4

ԴԱՎԻԹ ԳԱՍՊԱՐՅԱՆ. «Յայ գրականությունը հայոց պատմական հոգեկերտվածքի գեղարվեստական խտացումն է»

Հարցազրույց բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, արվեստի վաստակավոր գործիչ Դավիթ Գասպարյանի հետ

Սկիզբը՝ էջ 3

VIII, IX դասարանների դասագրքերը կոչվում են «Գրականություն», ավագ դպրոցի X, XI, XII դասարաններինը՝ «Յայ գրականություն»: Սա այնքան տարրական բան է, բայց կրթության ոլորտի պատասխանատուներն ասես գիտակցաբար խառնում են իրար, շփոթ առաջացնում և ծիծաղելի վիճակների մեջ հայտնվում: Ես մեկ-երկու տեղ բացատրել եմ, բայց որ չեն ընկալում, ի՞նչ ասես: VII, VIII, IX դասարանների դասագրքերը կոչվում են «Գրականություն»։ Ինչո՞ւ, որովհետև հայ գրողներից բացի ընդգրկված են նաև Յոնան, Շեքսպիր, Զեյն Լոնոն, Յեմիկուել Ե. Վիլյամ Սարոյան: Ավագ դպրոցի X, XI, XII դասարանների դասագրքերը հանրագումարային պատկերացում են տալիս հայ գրականության պատմական զարգացման օրինակաբանությունների մասին և կոչվում են «Յայ գրականություն»:

Եթե դպրոցականը ձեզ հարցնի՝ «Ինչո՞ւ միջնադարում մենք թատրոն չենք ունեցել», ի՞նչ կպատասխանեք: IX դասարանի դասագրքում (էջ 131-132) շատ հանգամանորեն պարզաբանված է. հայ եկեղեցու հայրերը ժամանակին հանդես են եկել ճառերով՝ «Վասն անօրեն թատերաց դիվականաց» և մերժել թատրոնը, բանգի նրանց պատկերացմամբ՝ թատրոնը մարդուն հեռացնում է հավատից, այդ իսկ պատճառով դիվային մի բան է: Ես մեր եկեղեցու պահանջով՝ թատրոնը մեր մշակութային կյանքում տեղ չգտավ:

Կաթոլիկ եկեղեցին պահպանեց թատրոնը, անտիկ թատրոնի ավանդույթները շարունակելով՝ ասպարեզ եկան Լուսին Կեզան, Սերվանտեսը, Շեքսպիրը...

Բայց տեսե՛ք՝ ինչ կատարվեց: Շեքսպիրի մահից (1616, ապրիլի 23) մի քանի տարի հետո՝ 1642-ի սեպտեմբերի 2-ին և 1647-ին Անգլիայի պառլամենտը որոշում է ընդունում թատրոնը փակելու վերաբերյալ: Այն, ինչ որ մերոնք հիմնադրող դարում էին արել, նրանք արեցին տասնյոթերորդ դարում: Ինչո՞ւ, որովհետև ատոմ էին՝ ժողովուրդն ավելի շատ թատրոն է գնում, բան՝ եկեղեցի, իսկ թատրոնը դարձել է անառակության, զեխության հավաքատեղի: Փակեցին թատրոնները, որ մարդիկ հավատքի գան, դարձի գան, եկեղեցի գնան:

Այսպիսից հետո դասագրքում ավում է, որ թատրոնը հայ կյանք ներմուծվեց XVIII դարում Միսիսթայան միաբանության կողմից, իսկ XIX դարում տարածվեց Կ. Պոլսում և Թիֆլիսում:

Յիմա այս դրվագը ես շահարկում է փոխնախարարուհին՝ առանց խորանալու կամ առանց հասկանալու, թե ինչն ինչոց է: Լաեւ ոչ մի կերպ չի ուզում տեսնել, ասել, կրկնել, որ ավագ դպրոցի դասագրքերը վերնագրված է «Յայ գրականություն», որի վրայից նրանք գիտակցաբար ջնջել են հայ բառը և աղավաղել ու արատավորել ամեն ինչ:

– **Պարոն Գասպարյան, քանի որ այս աղմուկը բարձրացավ նաև դասագրքերի շուրջ, կուզեի՞նք համառոտ ներկայացնել հայ դասագրքաստեղծման պատմությունը, ինչի ավանդույթներն ստեղծվել են տակավին հաշտուր Աբովյանից սկսած:**

– Այո, գրականության ու լեզվի դասագրքեր ստեղծել է Աբովյանը, հիշենք հայտնի «Նախաշավիղը»: Նա եւ՝ դպրոցների հիմնադիր էր, եւ՝ մանկավարժ, եւ՝ դասագրքերի հեղինակ: Բայց չմոռանա՛ք՝ նրանից

ավելի վաղ դասագրքաստեղծման գործում մեծ ավանդ ունեն Միսիսթայանները՝ Միսիթար Սեբաստացուց սկսած. նրանք գրեցին ինչպես բերականության, այնպես և գրականության ու գրականության տեսության ձեռնարկներ: Դասագրքաստեղծման գործում ավանդ ունեն Պատկանյանը, Աղայանը, Լար-Դոսը, Լեոն, Շանթը, Թումանյանը, Ստ. Լիսիցյանը, Կրթ. Փափազյանը, Աբեղյանը, Աճառյանը, Սուրխաթյանը, Ս. Հակոբյանը, Տերտերյանը, Բակունցը, Յոհան Ասատուրը և նրա կին Սիպիլը, Ռ. Չարդարյանը, Հակոբ Օշականը, Մուշեղ Իշխանը, Հարություն Մկրտչյանը, Մկրտչյանը, Ջրբաշյանը, Թամրազյանը, Աղաբաշյանը: Միայն եղի՞չ Զարենցը տասնչորս անուն դասագրքի հեղինակ է: Կարելի է հայ գրականության դասագրքաստեղծման հարցը դարձնել շատ ավելի հանգամանակի ուսումնասիրության նյութ և գրել համապատասխան մի աշխատություն:

Ես ներկայումս գործող VII, VIII, IX դասարանների «Գրականություն» դասագրքի հեղինակն եմ և ավագ դպրոցի հոմանիստը հոսքի XI, XII դասարանների «Յայ գրականություն» դասագրքի համահեղինակը:

2010-ին մրցույթ հայտարարվեց. մրցույթին մասնակցում է ոչ թե գիրք ստեղծող հեղինակը, այլ հրատարակչությունը: «Տիգրան Մեծ» հրատարակչությունը մրցույթին մասնակցելու նպատակով դիմեց ինձ. պահանջն այսպիսին էր՝ պետք էր ներկայացնել VII դասարանի դասագրքի 60 տոկոսը, VIII-ի՝ 40 տոկոսը և IX-ի՝ 20 տոկոսը, որպեսզի մրցույթը շահելու դեպքում հաջորդաբար լրացվեին ու տպագրվեին: Դասագրքերը պատրաստեցի և հանձնեցի «Տիգրան Մեծին»: Իրենց հեղինակներով մրցույթին մասնակցում էին նաև այլ հրատարակչություններ: Յեղիհակի անունը մրցույթի ժամանակ չի հոլովվում, գաղտնի է պահվում և ոչ ոք չի իմանում, թե ով է այդ դասագիրքն ստեղծողը: Դասագրքի հիմքը ծրագիրն է, որ ստեղծում է ծրագրաստեղծ խումբը և փորձաշրջան անցնելուց հետո հաստատվում նախարարության կողմից, մրցույթին մասնակցող ոչ մի հեղինակ իրավունք չունի շեղվելու ծրագրից:

Իմ հեղինակած դասագրքերը շատ բարձր գնահատականով հաղթեցին: 2011 թվականից սկսած այդ դասագրքերը գործում են և ունեցել են մի քանի վերահրատարակություն: Այդ դասագրքերն առաջվում են նաև սփյուռքի մի քանի գաղթօջախներ, Վրաստանի հայկական դպրոցներ: Այդ գրքերի վրա շատ ջանք եմ թափել, շատ մանրակրկիտ եմ աշխատել, անգամ 14-15 սրբագրություն են ունեցել, այդքան անգամ կարդացել և ուղղել եմ: Իմ հեղինակած այդ դասագրքերն ահա տաք տարի է, ինչ գործում են դպրոցում: Իսկ ավագ դպրոցի «Յայ գրականություն» դասագիրքը վերափոխումներով շրջանառության մեջ է դեռեա 1993 թվականից, անկախության շրջանի առաջին դասագրքերից է:

Մշտապես եղել եմ դպրոցներում, հետեւել դասագրքերի գործունեության ընթացքին, լսել աշակերտներին, ուսուցիչներին, քննարկել նրանց հետ և հերթական վերահրատարակության ժամանակ հաշվի առել աննշան դիտողությունն անգամ: Այսպես է եղել, իսկ դպրոցներից, ուսուցիչներից միայն երախտագիտության խոսքեր եմ լսել: Գրքերի խմբագիր բանաստեղծ Արտակ Ոսկանյանը ոգեւորված ասաց՝ երանի մեր սերունդն էլ այս դասագրքերով կրթվեր, եթե այսպես

գրականություն սերտեի՞նք, ուրիշ, շատ ավելի զարգացած մարդիկ կլինեի՞նք...

– **Պարոն Գասպարյան, Դու տեղյա՞կ եք, թե գրականության առարկայական չափորոշիչները և ծրագրերը վերանայող աշխատանքային խմբում ովքեր են ներգրավված:**

– Տեղեկացել եմ միայն ցանկը հրապարակվելուց հետո: Որքանով հիշում եմ՝ 2018 թվականին էր աշխատանքային խումբը ստեղծվում, ես ես դիմել եմ մրցույթին, բայց չեմ ներգրավվել այդ խմբում: Թե ովքեր են՝ արդեն պարզ է: Խումբն այդ կազմով մասնագիտական վստահություն չի ներշնչում, ինչն ակնհայտ դարձավ նրանց կազմած և վերջերս շրջանառած փաստաթղթով: Որեւ մեկի հասցեին վատ բան չունեմ ասելու, ոմանց չեմ էլ ճանաչում, բայց իրենց արած գործը, մեզմ ասած, ինձ համար ընդունելի չէ, իսկ ոչ մեզմ՝ իրական խայտառակություն է:

Քանի որ օրական մի բան են փոխում, ինձ համար հիմքը նախնական տարբերակն է, միևնույն վերջնականի ստեղծումը: Իրենք մոլորության մեջ են, երբ ասում են՝ միջնադարի պատմիչներին պատմությունն առարկայից են անցնում: Մինչդեռ V և հետագա դարերի մատենագրությունը հավասարապես իր մեջ ընդգրկում է եւ հայոց պատմություն, եւ հայոց եկեղեցու պատմություն, եւ բանահյուսություն, եւ գրականություն: Այն ժամանակ այսպես ամեն ինչ համարյակալան էր, այսօր ամեն բնագավառ իր բաժինն այնտեղից է բաղում: Ի՞նչ է, Մ. Աբեղյանի պես հսկան այդքան բան չգիտե՞ր, որ այդ նյութերի ուսումնասիրությամբ գրեց եւ 1944-1946 թվականներին հրատարակեց «Յայոց հին գրականության պատմություն» երկհատոր կոթողը: Այն աշխատությունն է:

Սա անհրաժեշտություն է, դպրոցականը պիտի իմանա խորենացու, մյուս պատմիչների մասին: Որտեղից՞ սովորողն Ազաթանգեղոսի անվանն ու գործին ծանոթանա, եթե ոչ դասագրքից: Կաթոլիկ եկեղեցու հայրը՝ Յոհան Կաթոլիկոսը, Լարեկացուն հռչակեց Տիգրանյան եկեղեցու վարդապետ, արձանը տեղադրեց Վասիլյանում: Սրանից մեծ գնահատանք դժվար է պատկերացնել, իսկ ինչ ենք անում մենք՝ փոխանակ ստեղծենք Լարեկացիագիտության համաշխարհային կենտրոն, Լարեկացուն հանում ենք դասագրքից: Ո՞ւմ ձեռքը գնաց այդպիսի ինքնասպանություն...

– **Այլ ձեռնախառնումներ էլ են նկատվել այդ չափորոշիչների մեջ:**

– Յայոցները եւ Սայաթ-Նովա ոչ թե առանձին են անցնում, այլ կցել են՝ հայրենները՝ Սահյանին, իսկ Սայաթ-Նովան՝ Չարենցին: Չարենցը Սայաթ-Նովայի ոճավորումով գրեց «Տաղարանը»: Եւ ի՞նչ է ստացվում՝ Չարենցի ոճավորումով պիտի Սայաթ-Նովա բացահայտել: Եւ այդ Սահյանին է վերաբերվում, ով մեծ բանաստեղծ է, ինձ համար շատ գնահատելի: Բայց Սահյանի հայրեններն առանձնապես նրա երեւելի էջերը չեն: Եւ ինքն էլ հայրենների երեւույթն է վերցրել ու ոչ թե տաղաչափական մանրակրկիտ կառուցվածքը: Եւ գրել է հայրենները: Բայց միջնադարի հայրենները՝ այդ անմասն գանձերը, բերել-կցել Սահյանին և անցնել որպես նրա հավելված՝ նշանակում է արհամարհել միջնադարյան գրական արժեքները, ձեռք բաշել մեր ժողովրդի ստեղծած հարստությունից և չհասկանալ, թե ինչ են անում: Ասված է, չէ՞. «Թող գնոսա, հայր, զի նոքա ոչ գիտեն զինչ գործեն»:

– **Պարոն Գասպարյան, իսկ ի՞նչ կասեք**

այն երիտասարդների գրականության մասին, որոնց երկերը նախատեսում են ընդգրկել նոր ստեղծվող դասագրքերի մեջ: Սա եւս բուռն քննարկումների տեղիք տվեց:

– Ա՛յն, որ կան շնորհալի երիտասարդ գրողներ, այն որ գրականության մեջ անընդհատ որոնումներ են, ժխտել չի կարելի: Գրականությունը, արվեստն ընդհանրապես, միշտ սիրում են որոնում (թեեւ Պիկասոն ասում էր՝ ես չեմ որոնում, ես գտնում եմ): Եւ եթե որոնումներ չեղան, գեղարվեստը մարելու միտումներ կորստերի: Թող որոնեն, թող գրեն, ինչ ուզում են, թող դիմեն անգամ ամենաձայրահեղ քայլերի, արվեստի ճանապարհի համար դրանք ընդունելի են, բայց որոնումը՝ որոնում, արժեքը՝ արժեք: Ես այդ որոնման և նորի կողմնակից եմ: Բայց ընթացիկ գրականության մեջ երիտասարդ գրողի որոնումը մի բան է, դասագրքում դեռեա չբյուրեղացած ստեղծագործությունը գետեղելը՝ մեկ ուրիշ բան: Եւ պատահական չէ, երեք երիտասարդ գրող հայտնեցին, որ չեն ուզում իրենց երկերն ընդգրկվել դպրոցական դասագրքերում: Հանրային հեռուստատեսությամբ նրանցից մեկը հայտարարեց, որ իր գրածները 18 և ավելի բարձր տարիք ունեցողների համար են: Մենք ժամանակակից կայացած գրողների կարող ենք տեղ տալ 5-6-րդ դասարանների դասագրքում (Ռազմիկ Դավթյանի որոշ գործեր, Խաչիկ Մանուկյանի «Բարձունքը մերն է, տղերքը չկան» բանաստեղծությունը, կարելի է ընդգրկել ժամանակակից ուրիշ գրողների ես):

Ես մի քանի առաջարկություններ ունեմ: Պատրաստ եմ կազմել ժամանակակից գրականության դպրոցական ձեռնարկի պես մի բան, որտեղ կգետեղվեն գրողի լուսանկարը, կենսագրությունը, երկերի մատենագիտությունը և գործեր. բանաստեղծներից՝ միևնույն կերպ ընդգրկված, արձակագիրներից՝ մի լավ պատմվածք կամ հատված մեծ գործից, նաև կարծիքներ նրանց մասին: Ինչ ուսուցիչներն իրենց նախադրությամբ դրանք կարող են ներկայացնել աշակերտներին:

Ժամանակակից գրականությունը դպրոցում ներկայացնելու մի ուրիշ ձև է եւ կա՝ հանդիպում գրողի հետ: 1964-ին՝ 50-ամյակի առթիվ, Յամո Սահյանին հրավիրեցին մեր դպրոց: Այդ հանդիպումն իմ մեջ տպավորվեց, այն ժամանակ Սահյանը դասագրքային հեղինակ չէր: Բայց անմիջական հանդիպումը բանաստեղծի հետ անմոռանալի էր, իր խոսքը լսեցի՞նք, բանաստեղծություններն ասմունքեցին, դա ավելին էր, բան դասագրքում գետեղվել: Այդպիսի հանդիպումներ կարելի է կազմակերպել հեռուստատեսությամբ՝ վերականգնելով ուսումնական հարդորումները կամ հատկացնելով գրական ժամ:

Դպրոցին կարելի է հասցեագրել նաև համաշխարհային գրականության քրեստումատիա. այն, ինչ արդեն կա VII, VIII, IX դասարանների դասագրքում՝ բավարար է, մյուս հեղինակներին էլ կկարողան ամառային արձակուրդի օրերին:

Մեր մեկը երկու անելու փոխարեն կարծես ընտրել ենք նվազման կործանարար ուղին՝ այսքան արտագաղթ, տնտեսական, գիտական, մշակութային, առողջապահական այսպիսի գահավեժ անկում, որ մեզ պաշարեց անկախության առաջին իսկ տարիներից, անհնար էր պատկերացնել: Փոքրիկ մի օրինակ. Յայաստանը կարող էր դառնալ տարածաշրջանային գիտական կենտրոն. նախկին վարչակարգի օրոք Իրանից գալիս Յայաստանում ատենախոսություններ էին պաշտպանում, եւ այդ վկայականը նպաստում էր նրանց մասնագիտական առաջընթացին: Բայց մեր գիտիտրիտությունն ամեն ինչ այնքան արագ վերածեցին դրամական շրջանառության և գիտությունը հանեցին վաճառքի, որ Իրանը դարձրեց ճանաչելի այդ վկայականների վավերականությունը: Առաջանցիկ քայլ անելու փոխարեն հետընթաց քայլ արեցինք և նորից կրճատեցինք տարածությունը: Ու ոչ ոք չպատժվեց... Մինչդեռ այդ գործարքների «հերոսները» անգամ Քրիստոսից են խոսում...

Յիմա էլ «հերոսների» մեկ այլ խումբ կրճատում է հայ գրականության սահմանները:

– **Փաստորեն Լույս խնդրի առնչությամբ ունենք արմատապես իրարից տարբերվող երկու**

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հայտարարությունը

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտն անկախության 30 տարիներին մշտապես մասնակցել է չափորոշիչների և դասագրքերի ստեղծմանը: Այս անգամ էլ հաստատությունն իր պարտքը համարեց մասնակից դառնալ այդ հույժ կարեւոր գործին: Հափորոշիչների ստեղծման խմբում ընդգրկվելու համար ինստիտուտի գիտաշխատողներից առաջադրվեց պատմագիտության թեկնածու Լիլիթ Յուզբախչյանի թեկնածությունը: Սակայն նրա հայտը մերժվեց՝ առանց պարզաբանման: Շուտով պարզ դարձավ, որ մերժումներ են ստացել նաեւ գիտակրթական այլ հաստատությունների փորձառու մասնագետներ: Նկատելի էր, որ ի սկզբանե այդ խմբի ձևավորման գործընթացը տեղի էր ունենում տարօրինակ գաղտնիության պայմաններում: Երբ օրերս բնարկման հանվեց նախագիծը և հրապարակվեց խմբի անդամների անունները, շատ բան դարձավ հասկանալի:

Շանթախաղված փաստաթղթերի՝ հանրապետության գիտակրթական այլ հաստատությունների հետ մեկտեղ պատմության ինստիտուտը կարելի էր համարել իր սկզբունքային անհամաձայնությունն արտահայտել հանրակրթական «Հայոց պատմություն» առարկայի ուսումնառության հայեցակարգի նախագծի վերաբերյալ: Նախագծում բացակայում է «հայրենասիրություն» հասկացությունը, ինչը հայաստանցի աշակերտին «Հայոց պատմություն» առարկայի միջոցով սերմանվող հիմնաբարային գաղափարն է:

Նախագծի կազմողները Հայոց պատմության շարադրանքն սկսում են ոչ թե Զ. ա. III հազարամյակից, այլ մ.թ.ա. IX դարից, այսինքն՝ Արարատյան թագավորության (Ուրարտու) ժամանակաշրջանից՝ ուսումնական ծրագրից դուրս թողնելով մեր պատմության նախորդ երկու հազարամյակները և այդպիսով փաստորեն կասկածի տակ դնելով մեր ժողովրդի տեղաբնիկության իրողությունը: Դուրս է թողնված նաեւ նախապատմական դարաշրջանը, որը նույնպես կարելի է, բանի որ հին բարի դարից սկսած Հայկական լեռնաշխարհում տեղի ունեցող իրադարձություններն էին, որ հող նախապատրաստեցին հայոց պատմության սկզբնավորման համար: Ավելին, «Հայկական լեռնաշխարհ» աշխարհագրական անվան փոխարեն հաճախ օգտագործված են «Անատոլիա» և «Հարավային Կովկաս» արհեստածին ու զուտ քաղաքական նկատառումով հորինված եզրույթները:

Հայ աշակերտի կողմից Հայաստանի պատմության մասին ամբողջական պատկերացում կազմելու տեսակետից անընդունելի է նաեւ հայեցակարգի նախագծում իրադարձությունների ժամանակագրության խաթարումը: Առաջարկվող հայեցակարգի նախագծից ամբողջությամբ հանված են Առաջին աշխարհամարտի տարիներին ռուսական զորքերի կազմում Արեւմտյան Հայաստանի տարածքներն ազատագրած և արեւմտահայ գաղթականներին ցեղասպանությունից փրկված հայ կամավորական ջոկատների մասին տեղեկությունները: Ցանկը կարելի է շարունակել...

Եթե սույն հայեցակարգի նախագծում նկատված վերոնշյալ դրսեւորումների պատճառներն ու շարժառիթները մինչ այդ անբացատրելի էին թվում, ապա վերջին

օրերի հրապարակում-բացահայտումներից հետո շատ հարցերի պատասխաններ հստակեցվեցին: Ինչպես պարզվեց, «Հայոց պատմություն», «Համաշխարհային պատմություն», «Հասարակագիտություն» առարկաների հայեցակարգի նախագծերը մշակող որոշ փորձագետներ, այդ թվում՝ խմբի ղեկավարը, մի բանի այլ անձանց հետ 2016-2018 թթ., փաստորեն գաղտնիության պայմաններում մասնակցել են օտար դրամաշնորհային ծրագրի, կազմակերպել բնակարաններ Հայաստանում և Թուրքիայում, որոնց արդյունքում թուրք հեղինակների հետ համահեղինակությամբ 2017 թ. հրատարակել են «Պատմության ուսուցումը Թուրքիայի և Հայաստանի դպրոցներում. քննադատություն և այլընտրանքներ», իսկ 2019 թ.՝ «Պատմության ուսուցման այլընտրանքային չափորոշիչները Հայաստանի և Թուրքիայի համար» ձեռնարկները: Այդ մասին տեղյակ չեն եղել ոչ միայն Հայաստանի գիտակրթական ոլորտի մասնագետները, այլ նաեւ ծրագրին իրականացնող խմբի անդամների աշխատանքային ընկերները՝ ԵՊՀ համաշխարհային պատմության ամբիոնի աշխատակիցները:

Այդ գրքերում մակրամասն ներկայացված են Հայաստանում և Թուրքիայում պատմու-

” Ի դեպ, նոր չափանիշների հեղինակները շրջանառության մեջ գտնվող ուսումնական ձեռնարկներում փաստորեն չեն տեսել որեւէ դրական ու ուսանելի կյուբ:

թյան դասագրքեր գրելու նոր չափորոշիչները: Հատկանշական է, որ հիշյալ ձեռնարկների հայ «մասնագետները» հանդիմանում են 12-րդ դասարանի Հայոց պատմության դասագրքի հեղինակներին 2016 թ. Ապրիլյան պատերազմի դրվագները շարադրանքում ընդգրկելու համար՝ հավանաբար դա համարելով հայ աշակերտների շրջանում հարեւանների նկատմամբ թշնամություն սերմանելու քայլ:

Ի դեպ, նոր չափանիշների հեղինակները շրջանառության մեջ գտնվող ուսումնական ձեռնարկներում փաստորեն չեն տեսել որեւէ դրական ու ուսանելի կյուբ, որի պատճառով, ըստ էության առաջարկում են արմատապես վերանայել գործող ծրագրերը՝ մոռանալով, որ նույն Ապրիլյան պատերազմի հերոսները են գիտելիք էին ստացել ու դաստիարակվել գործող դասագրքերով: Ավելին, չափորոշիչների հեղինակները նոր դասագրքերում չեն կարելորել 2010-ական թվականներից լույս տեսած «Հայոց պատմության» ակադեմիական նոր բազմահատորյակի (ի դեպ, հրատարակված 6 գրքերը ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտը ԿԳՄՍ, ՊՆ ու Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունների միջոցով անվճար հատկացրել է Հայաստանի բոլոր դպրոցներին, զորամասերին, կենտրոնական ու համայնքային գրադարաններին) հայեցակարգային մոտեցումների ներառումը, որոնց հեղինակները, ինչպես և հանրապետության և Սփյուռքի ամենաճանաչված մասնագետներ, պատմական գիտության վերջին խոսքը ներկայացրել են հանրության դատին:

Թուրք հեղինակների հետ դրամաշնորհային նմանատիպ ծրագրերի մասնակցելով, ակամայից փորձ է արվում կյանքի կոչել



Թուրքիայի նախագահ Էրդողանի բազմիցս հնչեցրած՝ «պատմաբանների հանձնաժողովի» ստեղծման գաղափարը, որն իբր թե պետք է զբաղվի պատմական, այսպես կոչված վիճելի խնդիրների, առաջին հերթին՝ Հայոց ցեղասպանության հարցի

յան Աղբյուր» համարելու տխրահռչակ գործելակերպից, իսկ Թուրքիան՝ այդ գործում նրան աջակցելուց ու Հայոց ցեղասպանության փաստը ժխտելուց: Ասվածի ամենավառ ապացույցներն են օրեր առաջ Տավուշի մարզի սահմանամերձ գյուղերի վրա աղբյուրակազմական զինուժի հարձակումները, Աղբյուրին սատարելու Թուրքիայի ռազմաշունչ հայտարարությունները, հայկական երկու պետությունների հարեւանությամբ այս պահին թուրք-աղբյուրակազմական լայնածավալ զորավարժությունների անցկացումը:

Վերոնշյալից ելնելով՝ ՀՀ Ազգային անվտանգության ծառայության ուշադրություն ենք հրավիրում այս խնդրի վրա, բանկայն այն այլևս ոչ միայն և ոչ այնքան կրթական հարց է, որքան լրջագույն սպառնալիք մեր ազգի ու պետության անվտանգության համար:

- ԱՇՈՏ ՄԵԼՆՆԱՆ**
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
ՀԱԿՈՒ ՄՈՒՐԱԴՅԱՆ
Գիտական հարցերի գծով փոխտնօրեն, պ.գ.դ., պրոֆեսոր
ԳՈՐԱՐ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ
Գիտական բարոյաբան, պ.գ.թ., դոցենտ, Հին դարի պատմության բաժնի վարիչ,
ԱՐՏԱՇԵՍ ՇԱՅՆԱՆՈՐԱՆ
Միջին դարերի պատմության վարիչ, պ.գ.թ., դոցենտ
ԱԼԲԵՐՏ ԽՈՒՍՏՅԱՆ
Հայ պարբերական մամուլի պատմության բաժնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ
ՈՒՌԲԵՆ ՍԱՅԱԿՅԱՆ
Նոր պատմության բաժնի վարիչ, պ.գ.դ. ԱՐՄԵՆ ՄԱՐՈՒԶՅԱՆ
Հայկական հարցի և հայոց ցեղասպանության պատմության բաժնի վարիչ, պ.գ.դ., պրոֆեսոր
ԳԵՎՈՐԳ ՍՏԵՓԱՆՅԱՆ
Հայկական գաղթաբանների և սփյուռքի պատմության բաժնի վարիչ, պ.գ.դ., պրոֆեսոր
ՀԱՄՈ ՍՈՒԲԱՍՅԱՆ
Երիտասարդ գիտաշխատողների խորհրդի նախագահ, պ.գ.թ., դոցենտ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՎԵԼ Է ԻՆՍՏԻՏՈՒՄԻ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ 2020 Թ. ՀՈՒՆԻՍԻ 30-Ի ՀԵՌԱՎԱՐ ՆԻՍՏՈՒՄ 3 ՕԳՈՍՏՈՍԻ 2020 Թ.

Ն ռիբորոշում: Ինչպե՞ս եք տեսնում հանգուցալուծումը:

– Նախ՝ չափորոշիչները ներկայացրած խումբը համարժեք չէ գիտականների, մասնագետների, մանկավարժների, հանրության լայն շրջանակի ներկայացուցիչների ժողովին, ովքեր մերժում են նրանց արածը, որի վրա վստահվել են միջոցներ և ժամանակ: Նրանց ներկայացրածը մերժելի է. գրական գործիչներն էլ մերժեցին, պատմաբաններն էլ: Պետք է ստեղծել մասնագետների մի լուրջ և թափանցիկ խումբ, ովքեր են դպրոցը գիտեն, են մանկավարժությունը, են առարկան ու պետական աջակցությամբ ձեռնարկեն այդ գործը, որպեսզի «կոնսոլիդացվեն»

տպավորություն չստեղծվի: Այդպես կհասնենք բաղձային, բանի որ կոսմետիկ ուղղումներն արդյունավետ չեն, պարզապես չի ստացվի: Մեռած մարմնի ի՛նչը շտկես կամ ի՛նչու՛ շտկես: Պարզապես անհնար էր պատկերացնել, որ «Բաց հասարակության» դրամական միջոցներն այդպես կկուրացնեին հայ մարդուն և կստիպեին նրան ասել, թե հայ աշակերտն իր լեզուն ու գրականությունը չի սիրում, թե հայ գրականությունն ինչու է այբբան հին ու երկար, մի բան, որ նրա հարստությունն է և համաշխարհային փառքը:

Ասում են՝ հայ գրականությունը համաշխարհային գրականության մաս է, էլ ինչո՞ւ առանձնացնել հայ բառը: Հայ գրականու-

թյունը համաշխարհային գրականության մաս է իր Ոսկեդարով, Լաբեկացիով և հայ դպրության մյուս պետերով, որոնց ուրանում եք... Այս ո՞ւմ վրա եք սուր բարձրացնում, հայոց մեծ ազգին չե՞ք ճանաչում...

Բացե՞ք աչքերը, նայե՛ք Հայաստանի սահմաններին, նայե՛ք իրենց ազգային նպատակների համար ոտքի կանգնած աշխարհի ժողովուրդների պայքարին ու պատերազմներին և հետևություններ արե՛ք հա- նուն իրական հայ դպրոցի:

...Իսկ խնդրի լուծումը պահանջում է ստեղծել աշխատանքային նոր խումբ:
ԶՐՈՒՅՑԸ՝ ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՆԻ ԵՎ ՎԱՐՈՒՄ ՕՐԲԵԼՅԱՆԻ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 2020 թ. օգոստոսի 31-ին կկայանա «ՍՅՈՒՄԻՔ» ջրօգտագործողների ընկերության տնօրենի պաշտոնի համար մրցույթ: Մրցույթի մասնակցության հայտերն ընդունվում են մինչև 2020 թ. օգոստոսի 28-ի ժամը 14:00: Հասցեն՝ ՀՀ Սյունիքի մարզ, ք. Կապան, Ազատամարտիկների 3:

ԿՈՐԵԼ Է Աշոտ Շուրայի Գալստյանին պատկանող S150 տրակտորի 21-80 LS պետհամարանիշը: Համարել անվավեր:

ՀՀ ԿԳՄՍ Նախարար Արայիկ Հարությունյանը գրառում է կատարել



Հարգելի ուսանողներ եւ դասախոսներ, այսօր պարետատան հետ քննարկման արդյունքում որոշում է կայացվել վերսկսել դասապրոցները նաեւ բուհերում:

Սեպտեմբերի 1-ին դասապրոցները կմեկնարկի միայն բակալավրի առաջին կուրսի ուսանողների համար: Դասերի մեկնարկի կարգի եւ դասացուցակների մասին տեղեկացե՛ք բուհերի պաշտոնական կայքերից:

Մյուս բոլոր ուսանողների համար դասերի մեկնարկը տրվելու է սեպտեմբերի 15-ից:

Բուհերի ղեկավարների հետ հանդիպման արդյունքում նաեւ արձանագրվել է, որ բուհերը իրենք են որոշելու դասապրոցների կազմակերպման եղանակը՝ այն իրականացնելով հիբրիդային եղանակով՝ առկա եւ հեռավար: Մանրամասները բուհերը կիրառարակեն իրենց կայքերում եւ դասացուցակի մասին կհայտնեն լրացուցիչ:

Սիրելի ուսանողներ եւ դասախոսներ, հակահամաճարակային կանոնների որակյալ պահպանումը դասապրոցների անընդհատության ապահովման գրավականն է: Այս ամենին պատշաճ չվերաբերվելու դեպքում սահմանափակումներն անխուսափելի են: //

Սեպտեմբերի 15-ից դասերը կվերսկսվեն

Պարետատան կողմից որոշում է կայացվել սեպտեմբերի 15-ից դասերը վերսկսել հանրակրթական դպրոցներում, նախնական եւ միջին մասնագիտական հաստատություններում, երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներում՝ առկա ուսուցմամբ եւ սանիտարահիգիենիկ կանոնների պահպանմամբ: Այս մասին գրառում է կատարել ՀՀ ԿԳՄՍ Նախարար Արայիկ Հարությունյանը:

«Պարետատանը, մեր մյուս գործընկերները եւ նախարարությունը համատեղ մշակել են բոլոր հարցերի մանրամասն ընթացակարգերը եւ ուղեցույցները, որոնք կիրառարակվեն եւ կտարածվեն առաջիկա օրերին: Խնդրում ենք այս հարցում հետեւել բացառապես պաշտոնական լրահոսին՝ կառավարության, պարետատան, նախարարության եւ նախարարի էջերին:

Սիրելի ուսուցիչներ, ծնողներ եւ աշակերտներ, առաջիկա շաբաթներին մենք պետք է միասին ապահովենք ուսումնական տարվա հաջող մեկնարկը եւ բնականոն ընթացքը՝ հաշվի առնելով համավարակով պայմանավորված սահմանափակումները եւ բացառապես մեղիաստորանքները»:



Դադարեցված են Աղվանի-Տաթև ավտոմայրուղու աշխատանքները. ինչո՞ւ

Սյունիքում ի սկզբանե մեծ ոգեւորությամբ են ընդունել տեղեկատվությունը, որ 2020թ. հիմնադրուղու է Տաթև-Կապան ավտոմայրուղու Տաթև-Աղվանի հատվածը:

Օրեր առաջ արդեն մեկնարկել էին աշխատանքները, եւ կապալառու կազմակերպությունը, կարելի է փաստել, հաջողությամբ ու բարձր որակով էր կյանքի կոչում ռազմավարական այդ ճանապարհի կառուցման ծրագիրը:

Սակայն տեղի է ունեցել անսպասելի... Գորիսում կալանվել են կապալառու կազմակերպության «Վահագն եւ Սամվել» ՍՊ ընկերության հինգ բեռնատար մեքենաները, որոնք Գորիսից խիճ ու ավագ էին տեղափոխում կառուցվող ճանապարհի համար:

Ըստ ընկերության ներկայացուցիչ Գեղամ Սիմոնյանի՝ ահա տասը օր է, ինչ բեռնատարները կալանված են ոստիկանության Գորիսի բաժնում: Եւ, կապալառու կազմակերպությանը հասած տեղեկությունների համաձայն, մեքենաների բեռը՝ խիճն ու ավագը, իրեղեն ապացույց են ճանաչվել իրենց ընկերության հետ կապ չունեցող ինչոր քրեական գործով:

Ստեղծված իրավիճակը տարակուսելի է

գնահատվում այն առումով, որ բեռնատարները նույնպես արգելափակում են, թեեւ իրեղեն ապացույց խիճն ու ավագն են:

– Անշուշտ, մենք իրականացնում ենք բացառվում, որ նաեւ գույքային վնասի փոխհատուցման պահանջներ կայացնենք, – «Սյունյաց երկրի» ասաց «Վահագն եւ Սամվել» ընկերության ներկայացուցիչ Գեղամ Սիմոնյանը, – սակայն իրավիճակը ճանապարհաշինարարներին արդեն իսկ դրել է անելանելի ու անորոշ կացության մեջ:

Փաստորեն խաթարված է Աղվանի-Տաթև ճանապարհի կառուցման բնականոն ընթացքը, ինչը հարցականի տակ է դրել մայրուղին նախատեսված ժամկետում շահագործման հանձնելու հեռանկարը:

Ընկերությունում տեղյակ չեն նույնիսկ, թե ում վարույթում է գտնվում տվյալ քրեական գործը եւ ում կարող են դիմել: Մեքենաները կալանքի տակ առնելու պատճառ հանդիսացող քրեական գործը հարուցվել է Գորիսի քննչական բաժնում: Զիմա էլ պարզվում է, գործը տեղափոխվել է Գորիսի քննչական բաժնից:

Ճանապարհաշինարարները, մինչդեռ,

հստակ ուղի են առաջարկում փակուղային իրավիճակից դուրս գալու համար: Եթե ինչ-որ խնդրով կա հարուցված քրեական գործ, եւ եթե Գորիսից օրինական ճանապարհով ձեռք բերված ու շինհրապարակ տեղափոխվող խիճն ու ավագը տվյալ գործով իրեղեն ապացույց են ճանաչվել, ապա թող այդ ապացույցը պահվի սահմանված կարգով՝ նախաքննությանը չհույսադրելու համար: Իսկ բեռնատար մեքենաները, որոնց միջոցով են իրականացվում հիմնական աշխատանքներն Աղվանի-Տաթև կառուցվող ճանապարհին, պետք է անհապաղ ազատ արձակել գործող օրենքներին համահունչ, այլապես...

Այլապես Աղվանի-Տաթև ավտոմայրուղու կառուցումը վտանգված է, այն էլ՝ բազմաթիվ տարակուսանքների տեղիք տվող պատճառներով:

Մյուս կողմից՝ ճանապարհաշինական ընկերությունը շարունակում է վնասներ կրել օրեցօր, որը ոչ պակաս մտահոգող խնդիր է շինարարական կազմակերպության համար: **Հ.Գ. «Սյունյաց երկիր» սպասում է ոստիկանության Գորիսի բաժնի եւ ՀՀ քննչական կոմիտեի Գորիսի տարածքային կառույցի պարզաբանումներին:**

Վախճանվել է Սյունյաց աշխարհի ականավոր գիտնական Ռազմիկ Վարդանյանը

Խոր վշտով տեղեկացանք, որ օգոստոսի 16-ին երկրային կյանքին հրաժեշտ է տվել Սյունյաց աշխարհի ականավոր գիտնական, Գորիսի պետական համալսարանի պրոֆեսոր, քիմիական գիտությունների դոկտոր, Ռուսաստանի բնական գիտությունների ակադեմիայի հայաստանյան մասնաճյուղի լիիրավ անդամ, ՀՈՒՄԵՍՍԿ-ի քիմիական կինետիկայի ասպարեզի անդամ Ռազմիկ Լեւոնի Վարդանյանը:

Երախտաշատ պրոֆեսորի մահվան բոլոր ծանրագույն վիշտ է Գորիսի պետական համալսարանի ողջ աշխատակազմի համար: Խորապես ցավակցում ենք մեծանուն գիտնականին ճանաչող բոլոր մարդկանց, զորակցում ընտանիքի անդամներին, մերձավորներին, գործընկերներին:

Հանգի՛ր խաղաղությամբ, մեր սիրելի ընկեր Վարդանյան... **ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**



Դպրոցներն անցնում են էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության

ՀՀ ԿԳՄՍ-ն e-draft.am հարթակում հանրային քննարկման է ներկայացրել հանրակրթական ուսումնական հաստատություններում գործածվող փաստաթղթերի ցանկը եւ դրանց լրացման կարգը սահմանող հրամանի նախագիծը: Առաջարկվում է գործածվող 14 փաստաթղթերի մեծ մասն այսուհետ վարել էլեկտրոնային եղանակով: Նոր կարգի նպատակն է ոլորացնել հանրակրթական ուսումնական հաստատություններում պարտադիր գործածության փաստաթղթերի լրացումը, գործածումը եւ փաստաթղթաշրջանառությունը, ինչը նաեւ կմեծացնի

հանրակրթության ուսումնական հաստատությունների թափանցիկությունն ու հաշվետվողականությունը: Դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգում գործածվող փաստաթղթերի մի մասը ձեւավորվում է ինքնաշխատ եղանակով՝ արդեն մուտքագրված տեղեկությունների հիման վրա: Հանրակրթական ուսումնական հաստատություններում գործածվող փաստաթղթերի ցանկը ստորեւ.
1. Էլեկտրոնային դասամատյաններ
2. Աշխատողի անձնական էլեկտրոնային գործ

3. Սովորողի անձնական էլեկտրոնային գործ
4. Միջնակարգ կրթության ատեստատների բաշխման մատյան
5. Հիմնական կրթության վկայականների բաշխման մատյան
6. Ավարտական, պետական ավարտական, փոխադրական, էքստեռն քննությունների եւ գիտելիքների ստուգման արձանագրություններ
7. Էլեկտրոնային հաստիքացուցակ
8. Տարիֆիկացիոն մատյան, ոչ պետական ուսումնական հաստատությունների դեպքում՝ հիմնարկի որոշմամբ
9. Ուսումնական հաստատության մանկավարժական խորհրդի նիստի արձանագրություն
10. Ուսուցչի բաց թողած եւ փոխարինած դասաժամերի հաշվառման մատյան
11. Ուսումնական առարկաների թեմատիկ պլաններ՝ էլեկտրոնային տարբերակով
12. Դասալսումների արդյունքների արձանագրություն
13. Տնօրենի տեղակալների, առարկայական մեթոդական միավորումների ղեկավարների, դասղեկների աշխատանքային պլաններ՝ էլեկտրոնային տարբերակով
14. Սովորողների շարժի մատյան /ձեւավորվում է էլեկտրոնային մատյանում տվյալներ մուտքագրելու արդյունքում/:
Նշենք, որ առաջարկվում է ուժը կորցրած ճանաչել ՀՀ կրթության եւ գիտության նախարարի 2011 թվականի հունվարի 18-ի «Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատություններում գործածության ենթակա փաստաթղթերի անվանացանկը հաստատելու» N 23-Ն հրամանը:

ԱՐՏՈՒՇ ՂՈՒԿԱՍՅԱՆ. «Ուսուցման այս ձեռք բարձր պահանջներ է ներկայացնում ուսումնական գործընթացի կազմակերպմանն ու կառավարմանը»

Արտակարգ դրության ընթացքում ԳԴՅ-ում հեռավար ուսուցման ներդրման, արդյունքների եւ առկա խնդիրների շուրջ զրուցել ենք Գորիսի պետական համալսարանի ռեկտոր, ֆիզմաթ. գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արտուշ Ղուկասյանի հետ:

– **Պարոն Ղուկասյան, ինչպե՞ս կազմակերպվեց ԳԴՅ-ում արտակարգ դրությամբ պայմանավորված հեռավար ուսուցման ներդրման գործընթացը Գորիսի պետական համալսարանում:**

– Կորոնավիրուսի վարակի տարածումը կանխարգելելու նպատակով ԳԴՅ կառավարության կողմից հանրապետության ողջ տարածքում սահմանված արտակարգ դրության մասին որոշման համաձայն՝ Գորիսի պետական համալսարանը եւս ս.թ. մարտի 15-ից քայլեր ձեռնարկեց առցանց կրթական գործընթացի ներդրման ուղղությամբ՝ պարապրոդը մեղմացնելու եւ ուսուցման շարունակականությունն ապահովելու նպատակով: Անհրաժեշտ էր կրթության գործընթացը նոր հիմքերի վրա դնել. ապահովման սկիզբը դժվար էր, բանի որ ոչ բոլորն էին տիրապետում առցանց ուսուցման գործիքակազմի ու էլեկտրոնային ռեսուրսների կիրառությանը:

Այնուամենայնիվ, կարճ ժամանակահատվածում, ի պատիվ մեր դասախոսների զգալի մասի օպերատիվ գործունեության՝ առցանց տարբեր հարթակներում, առանց սահմանափակումների, կազմակերպվեց հեռավար ուսուցման գործընթացը:

ԳԴՅ-ի տեղեկատվական տեխնոլոգիաների եւ ծրագրային ապահովման լաբորատորիայի աշխատակիցների կողմից համապատասխան տեղեկատվություն եւ օժանդակություն տրամադրվեց պրոֆեսորադասախոսական անձնակազմին՝ առցանց ուսուցման կազմակերպման հարթակների, գործիքների կիրառման վերաբերյալ, իսկ ֆակուլտետների ղեկավարների կողմից աշխատանք տարվեց ուսանողներին իրազեկելու դասապրոցետի իրականացման այլընտրանքային ձևերի, ժամանակացույցի եւ կազմակերպչական այլ հարցերի մասին: Ուսուցումը հիմնականում իրականացվեց «Zoom», «Gmail.com», «Skype», «VIBER», «WhatsApp», «Messenger» թվային տեխնոլոգիաների ու գործիքակազմի միջոցով:

– **Ֆակուլտետների կողմից արդյո՞ք իրականացվել են հարցումներ ուսանողների տեխնիկական ապահովման, օգնության եւ տեղեկատվական ռեսուրսների հասանելիության վերաբերյալ:**

– Առցանց ուսուցման անցնելուց հետո համապատասխան հրամանների սահուն կիրառման համար ֆակուլտետները կարիք ունենին ճշտելու ինչպես դասախոսների, այնպես էլ ուսանողների՝ տեխնիկական հագեցվածության, համակարգչային իմացության եւ ուսուցման հեռավար մեխանիզմների կիրառման մակարդակը:

Բանավոր հարցումների համաձայն՝ պարզվեց, որ դասախոսների հիմնական մասն ապահովված էր տեխնիկական միջոցներով, ունենին համապատասխան գիտելիքներ եւ փորձ՝ հեռավար ուսուցման գործընթացի իրականացման համար. նախկինում դասախոսներից շատերն առցանց մասնակցել են ինչպես վերապատրաստման դասընթացների, այնպես էլ միջազգային եւ տեղական համագործակցությունների:

Ունեինք նաեւ դասախոսներ եւ վարչական աշխատակիցներ, որոնք չունեին բավարար համակարգչային իմացություն եւ տեխնիկական ապահովման, այդ աշխատակիցներին ԳԴՅ-ի տեխնոլոգիաների եւ ծրագրային ապահովման լաբորատորիայի աշխատակիցների կողմից տրամադրվեց



Պետք է վերանայել ինչպես բուհերի ռազմավարական ծրագրերը, այնպես էլ ուսուցման իրականացման գործընթացները՝ փոփոխություններ մտցնելով գիտելիքների գնահատման գործընթացում՝ գնահատման բաղադրիչներին ավելացնելով անհատական բաղադրիչը, որը ԳԴՅ-ում արդեն իսկ ներդրել ենք այս ուսումնական տարում...

համապատասխան տեղեկատվություն, իսկ բուհի կողմից՝ տեխնիկական սարքավորումներ՝ ըստ պահանջի:

Շատ ավելի բարդ էր հեռակա համակարգի ուսանողների հետ գործընթացների կազմակերպումը, բանի որ ուսանողների մեծ մասը չունեին համապատասխան տեխնիկական սարքավորումներ, էլ.փոստեր, սոցիալական ցանցերում եւ այլ հարթակներում օգտահաշիվներ, ինչպես նաեւ՝ համակարգչային բավարար գիտելիքներ: Սակայն ղեկավարների արդյունավետ աշխատանքի շնորհիվ լուծում ստացան առկա խնդիրներն ու ապահովվեց այդ ուսանողների մասնակցությունն ուսումնական գործընթացին:

– **Ինչպիսի՞ն էր ուսանողների ներգրավվածությունն ուսումնական առցանց պարապրոդներին:**

– Ուսուցման հեռավար մոդելի հիմնական առավելությունը հենց ուսուցման ճկուն ժամանակացույցի հնարավորությունն է, եւ ստեղծված իրավիճակում սա լավագույն տարբերակն էր: Ըստ առկա տվյալների՝ ուսանողների ներգրավվածությունն առցանց ուսուցման գործընթացում առավել մեծ էր, հատկապես՝ հեռակա ուսուցման կրթածելում, բան նախորդ կիսամյակներում, բանի որ ուսուցման այլընտրանքային այս ձեռագրին ավելի արդյունավետ է հեռավոր բնակավայրերում ապրողների, հատկապես աշխատող ուսանողների համար: Ամբիոնների կողմից այս ընթացքում իրականացվել են համապատասխան միջոցառումներ՝ հեռավար ուսուցման գործընթացի ուսումնամեթոդական ապահովման համար:

Այնուամենայնիվ, կարճ ժամանակահատվածում ի պատիվ մեր դասախոսների զգալի մասի օպերատիվ գործունեության՝ առցանց տարբեր հարթակներում, առանց սահմանափակումների, կազմակերպվեց հեռավար ուսուցման գործընթացը:

Սակայն ուսուցման այս ձեռք բարձր պահանջներ է ներկայացնում ուսուցման գործընթացի կազմակերպմանն ու կառավարմանը, անհրաժեշտ են նաեւ մի շարք անհատական ու հոգեբանական պայմաններ, նաեւ խիստ ինքնակարգապահություն, ինչն ուղղակիորեն կախված է սովորողի ինքնուրույնությունից ու ինքնագիտակցությունից: Այս ընթացքում բուհը փորձել է յուրաքանչյուր ուսանողի համար ապահովել հեռավար ուսուցման միջոցների եւ հիմնական տեղեկատվական ռեսուրսների հասանելիություն՝ համապատասխան կրթական ծրագրի կամ որս մի մասի յուրացման համար ուսումնական պլանով նախատեսված անհրաժեշտ ժամաքանակի ծավալին համապատասխան:

– **Արտակարգ դրության այս ժամանակահատվածի համար ԳԴՅ-ն, հաշվի առնելով համավարակի պատճառով ստեղծված իրավիճակի մարտահրավերները, արդյո՞ք մշակել է ուսուցման հեռավար մոդելի գործարկման քաղաքականություն եւ ընթացակարգ:**

– ԳԴՅ-ի կողմից հեռավար ուսուցման քաղաքականության ու ընթացակարգի մշակումը հրատապ խնդիր է, որի շուրջ նախագծային աշխատանքներ են տարվում: Քանի որ գործընթացն անսպասելի մեկնարկ ունեցավ եւ կանխատեսելի չէր տեսակառությունը, ուստի իրավիճակային լուծումներ ենք փորձել տալ ներքին մարտահրավերներին: Այդպեսով հանդերձ՝ արդյունքներն ընդհանուր առմամբ գոհացուցիչ են:

Եթե համավարակի ընթացքն այսպիսին լինի եւ ուսուցումը կրկին հեռավար ձեռագրով շարունակվի, ապա անհրաժեշտ կլինի Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության կողմից բարձրագույն կրթության բնագավառում ներդրել հեռավար ուսուցման իրականացման քաղաքականություն:

Պետք է վերանայել ինչպես բուհերի ռազմավարական ծրագրերը, այնպես էլ ուսուցման իրականացման գործընթացները՝ փոփոխություններ մտցնելով գիտելիքների գնահատման գործընթացում՝ գնահատման բաղադրիչներին ավելացնելով անհատական բաղադրիչը, որը ԳԴՅ-ում արդեն իսկ ներդրել ենք այս ուսումնական տարում՝ գիտելիքների գնահատման կանոնակարգի լրամշակմամբ, ինչպես նաեւ նոր իրավիճակում ռիսկերը

կառավարելու նպատակով շրջանառության մեջ դնելով գնահատման անցումային չափորոշիչներ:

– **ԳԴՅ-ում 2019-2020 ուստարվա ամփոփիչ ատեստավորման գործընթացը նույնպես կազմակերպվեց առցանց: Ինչպե՞ս կամփոփեք արված աշխատանքը:**

– Այս ուսումնական տարում բակալավրի եւ մագիստրոսի կրթական ծրագրերով, 16 մասնագիտությունների գծով ԳԴՅ-ն թողարկեց 316 շրջանավարտ: Ամփոփիչ ատեստավորման գործընթացը կազմակերպվեց մայիսի 27-ից հունիսի 15-ը՝ հեռավար ձեռագրով: Ստեղծված իրավիճակում բուհի կողմից արվել էր առավելագույնը՝ ամփոփիչ ատեստավորման գործընթացում ռիսկերը հնարավորինս կառավարելի դարձնելու եւ վերջնարդյունքներն ապահովելու համար: Համավարակային իրավիճակով պայմանավորված՝ ի լուրմ գործող կարգերի՝ ԳԴՅ-ն հաստատել էր 2019-2020 ուստարվա շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կազմակերպման անցումային (ժամանակավոր) դրույթներ, ըստ որոնց՝ ավարտական աշխատանքների պաշտպանությունները կազմակերպվեցին առցանց՝ «Zoom» տեսակոնֆերանսի միջոցով: Վիրտուալ այդ տարածքում քայլերի հաջորդականությունը մշակվել էր՝ հաշվի առնելով գործող եւ անցումային կարգի բոլոր կետերը եւ դրույթները: Գործընթացի պատասխանատուների հետ առցանց հանդիպումների ընթացքում մատնանշվել էին հնարավոր բոլոր խնդիրները եւ քննարկվել դրանց լուծման հնարավոր տարբերակները:

Պետք է նշել, որ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահները բավականին բարձր կարծիքներ են հայտնել հեռավար պաշտպանությունների կազմակերպվածության եւ որակական արդյունքների վերաբերյալ: Անհրաժեշտ են համարում ընդգծել, որ մեծ աշխատանք կատարվեց ԳԴՅ-ի գիտական կենտրոնի տեխնոլոգիաների եւ ծրագրային ապահովման լաբորատորիայի աշխատակիցների կողմից, որոնք հնարավորինս անթերի, առանց տեխնիկական խնդիրների ապահովեցին հեռավար քննաշրջանների եւ ամփոփիչ ատեստավորման գործընթացների ծրագրային-համակարգչային սպասարկումը:

– **Ինչպե՞ս կամփոփեք այս ժամանակահատվածի աշխատանքը, գոհացուցիչ են արդյոք անկա արդյունքները, բուհը պատրաստ է արդյոք նոր ուսումնական տարվան:**

– Հեռավար գործընթացները պարբերաբար վերահսկվել են ուս. աշխատանքների գծով պրոռեկտորի, ուսումնական մասի կողմից, ֆակուլտետները ներկայացրել են ընթացիկ տեղեկատվություններ, պատասխանատուների հետ քննարկվել են ծագած խնդիրները՝ հընթացք բարելավելու գործընթացը եւ կառավարելու ռիսկերը:

Գիտական խորհրդի տարեվերջյան նիստում ղեկավարող ներկայացրին մանրամասն հաշվետվություն՝ հեռավար քննական գործընթացների ուսանողների ներգրավվածության, ակադեմիական առաջադիմության ցուցանիշների վերաբերյալ՝ ըստ կրթածելների, մասնագիտությունների եւ կուրսերի: Արդյունքներն ընդհանուր առմամբ գոհացուցիչ են, թեեւ կան նաեւ խնդիրներ՝ կապված ուսման վարձվածքների հավաքման, շահակիցների ոչ բավարար ինքնակազմակերպվածության, ոչ համաչափ ներգրավվածության, հեռավար ուսուցման տեխնիկական անհարմարությունների եւ այլ հարցերի հետ: Համենայն դեպս, ֆակուլտետներում եւ ամբիոններում առցանց ուսումնական գործընթացներն ընդհանուր առմամբ կազմակերպվել են պատշաճ մակարդակով՝ ապահովելով էլքային կրթական արդյունքները:

Երկրում համավարակի տարածման հնարավոր զարգացումների համատեքստում քննարկման փուլում են նաեւ հաջորդ ուսումնական տարվա առաջին կիսամյակի պարապմունքների անցկացման ձեռագրի հետ կապված հարցերը: Հանձնարարել ենք պատասխանատու օղակներին՝ դասախոսների եւ ուսանողների համար կազմակերպելու վերապատրաստման դասընթացներ, խորհրդատվություններ՝ հեռավար ուսուցման գործընթացի լիարժեք տիրապետելու համար եւ հնարավորինս սպորտատ լինելու հաջորդ ուսումնական տարվան:

ՀԱՐՑԱԶՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՈՒՆԱ ՄԻՐՈՅԱՆԻ



Հեծանվավազքը լուսանկարներում

Առողջ Կապան, հերոսների օրրան. այս կարգախոսով նշվեց Կապան քաղաքի օրը

Սկիզբը՝ էջ 1

Նային երթակայության քաղաքի կարգավիճակ է ստացել 1938 թ., եւ շատերի մեջ տպավորություն է ստեղծվել, թե Կապանն ընդամենը 82 տարեկան է, այդուհանդերձ այն արդեն իսկ բնակավայր էր 5-րդ դարում, իսկ 10-րդ դարում հռչակվել էր Սյունիքի թագավորության մայրաքաղաք: Համայնքի ղեկավարը պատմական էքսկուրսը շարունակեց մինչև Արցախյան գոյամարտ՝ արժանին մատուցելով կապանցիներին, ովքեր հաղթեցին մեզ պարտադրված պատերազմում, իսկ տարածաշրջանում հրադադար հաստատվելուց հետո վերացրեցին ավերածությունների հետքերը՝ քաղաքին վերադարձնելով նախկին տեսքը: Օգտվելով պատեհ առիթից՝ համայնքապետը երախտագիտություն հայտնեց մերօրյա հերոսներին՝ բուժաշխատողներին, որոնց ջանքերի շնորհիվ ունեւք առողջ Կապան:

Կապանին ու կապանցիներին բարեմաղթանքի խոսքեր հղեցին Կապանի պատվավոր քաղաքացիներ Ռոման Նավասարդյանը, Էդիկ Բարսեղյանը, Հակոբ Ղազանչյանը, Սվետլանա Գեւորգյանը, Լիաննա Հակոբյանը, Հասմիկ Համբարձումյանը:

Կապանի պատմական անցյալից ուշագրավ դրվագներ ներկայացրեց երկրագիտական թանգարանի տնօրեն Գրիշա Սմբատյանը:



«Սոցիալիստական ռեալիզմ» թեմայով գրաֆիկական աշխատանքների ցուցադրանք էր կազմակերպվել Կապանի արվեստի թանգարանում, որի ցուցանմուշներին ծանոթացրեց թանգարանի տնօրեն Բորիկ Միսայանը:

Դե իսկ ողջ օրվա ընթացքում կապանցիները հնարավորություն ունեցան դիտելու տարբեր ժանրերի համերգներ՝ դասական երաժշտություն, «Առիթմիա» ռոք խմբի մենահամերգը: Տպավորիչ էր համերգը ժողովագարանների եւ «Պարի աստղեր», «Նարին», «Չանգեզուր» պարային խմբերի մասնակցությամբ: Տոնի մշակութային հատվածը եզրափակվեց շքահամերգով: Ըստ ամենայնի՝ այս ուրախ տրամադրությունը մարդկանց պարզեցեց Կապանի մշակույթի կենտրոնը (տնօրեն՝ Վիգեն Հովհաննիսյան):

Իսկ երեկոյան Կապանը երվներանգվեց տոնական հրավառույթյան գույներով:

**ՎԱՅՐԱՄ ՕՐԲԵՆՅԱԼ
15 ՕԳՈՍՏՈՍԻ 2020Թ.**

ՐԱՖՖԻՆ ԿԱՊԱՆԻ ԵՎ ԿԱՊԱՆՑԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Սկիզբը՝ էջ 1

Վեր են սլանում դեպի երկինք:


Լեռների կատարներին աճել է անտառը, ասես բարից է ծլել: Ժայռերի կրծքին արծիվների հետ բույն են դրել եւ մարդիկ, որոնք գառների պես բարի են խաղաղ մարդկանց նկատմամբ եւ վագրի պես չար՝ դեպի թշնամին: Բաղախ հզոր բերդի տասներկու աշտարակները դեռ կանգուն են, պարիսպները՝ խարխլված: Կատեի եկեղեցին կիսավեր: Ինձ թվաց, թե իրենց բարե լեզվով նրանք ասում էին. «Մենք դարերով պաշտպանեցինք ձեզ թշնամիներից, բայց դուք չեք պահպանում մեզ կործանումից»: Բաղաբերդի այդ պարիսպները յոթը դար իրենց գրկի մեջ պահպանել են Հայաստանի հոգեւոր մշակույթի տասը հազար ձեռագիր մատյանները: Սյունյաց Անդրովկ իշխանը 4-րդ դարում այդ պարիսպների տակ շախջախել է պարսից Շապուհ արքայի զորությունը: Այդ մեծ գրադարանը ոչնչացվել է 12-րդ դարում սելջուկների ավերիչ ձեռքով. նրա անուը պահպանվել է բերդի դիմացի սարայանջի մի ավերակ բնակավայրում, որը կոչվել է Գրաթաղ:

Ես, ներողություն խնդրելով, ընդհատեցի վիպասանի գրույցը, բացատրելով, թե Գրաթաղ անունով գյուղ կա այժմ եւ հարցրի, թե ինչ է նշանակում խոյակերպ բարե արձանը, ավելացնելով, որ նման արձաններ տեսել եմ Քիրս, Աջիբաջ, Փխուրուտ եւ Ավսարու գյուղերի հին գերեզմանոցներում, եկեղեցիների մոտ:

Րաֆֆին բացատրեց, թե Սյունիքում շատ կան այդ արձաններից եւ դա զինվորական խորհրդանիշ է. խոյ նշանակում է ռազմիկ, ճակատ առ ճակատ կռվող, հետեւապես դրանք պատերազմում ընկած հերոսների հուշարձաններ են:

– Հետո, այդ լավ հիշեցրիք, – շարունակեց Րաֆֆին, – ես շատ փնտրեցի Դավիթ Բեկի գերեզմանը, բայց ցավոք սրտի, ինձ չհաջողվեց այդ սրբազան դամբարանը տեսնել: Հայիծորի բերդի դարբասի առաջ միտքս գրավեց մի խոշոր դամբարանաբար, սիրտս բաբախեց հուզմունքից, բայց երբ վերձանեցի արձանագրությունը, տեսա, որ կալերցի Մահտեսի Հայրապետի գերեզմանն է, վախճանված 1651 թվականին: Գտա եւ Մելիք-Փարսադանյանի կողակցի՝ Ռեհանի դամբարանը, վախճանված 1741 թվականին: Շատ հետախուզեցի բերդի եկեղեցու ներսն ու գավիթը, նույնպես Հայիծոր գյուղի հին եկեղեցու շուրջը, դարձյալ ապարդյուն: Հետո Վահանավանքում շատ ման եկա, տեսա Սյունյաց իշխանների հոգեւոր հայրերի շիրիմները, – բայց փնտրածս չկա ու չկա: Մտածեցի, թե այստեղ մի առեղծված կա. այդպիսի կարծիք հայտնեցին եւ Բեխի ծերունիները, թե տապանաբարը թաքցված է կամ շրջված հակառակ երեսի վրա՝ գրեթե թաքցնելու նպատակով: Ո՞վ էր շահագրգռված այդ բան անելու. իմ կարծիքով կամ հարազատներն են թաքցրել Դավիթ Բեկի աճյունը՝ թշնամիների պղծումից փրկելու համար, կամ թշնամիները՝ նրա հիշատակը ջնջելու համար, որի հուշարձանը, որպես ազատամարտի դրոշ, կարող էր միշտ խանդավառել սյունցիների ըմբոստ ոգին:

Առանց մարգարեության, համոզված եմ, որ մեզանից հետո էլ մեր հայրենասեր սերունդը կհայտնագործե այդ մեծ սրբությունը: Ես տեսա Թորոս իշխանի գերեզմանը Եղվարդում, Մխիթար Սպարապետինը՝ Խնձորեսկի բերդում: Մելիք-Փարսադանի աճյունը մնաց Ազուլիսի թովմա Առաքյալի վանքում: Տեր Ավետիսը գնաց Երուսաղեմ մեղքերի թողության համար ապաշխարելու եւ չվերադարձավ: Իսկ Դավիթ Բեկի եւ մյուս հերոսների գերեզմանները այդպես էլ մնացին անհայտ: //



Սյունյաց Երկիր

ՀԻՆՉԱԲԹԻ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓՈՎԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:

Գլխավոր խմբագիր՝ **ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:

(+374 285) 5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

syuniacyerkir@mail.ru
www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Կյուբերը ներկայացնել մեքենագիր վիճակում:

«ԳՈՎԱԾԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում

տպագրվող կյուբերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է: © Նշանի տակ տպագրվում են գովազդային կյուբեր: Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:

Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպագրականը՝ 1030, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 20.08.2020թ.: